31.12.2024

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ՝ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ
Սևան համայնքի հարգելի բնակիչներ,

Ավարտվում է 2024 թվականը, որն աշխատանքի, արարման, մարտահրավերներին դիմակայելու տարի էր: Պատմության ենք հանձնում մեր հաջողություններն ու ձեռքբերումները, մեր դժվարություններն ու հիշողությունները:

Անցնող տարին ամփոփելիս արձանագրում ենք, որ հավասարակշռված գործելաոճի, համակարգված աշխատանքի շնորհիվ հնարավոր եղավ ապահովել համայնքային կյանքի բնականոն ռիթմը և գրանցել առաջընթաց:

Այո, քիչ չէին դժվարությունները, սակայն պատասխանատվության, իրավիճակը ճիշտ գնահատելու և պատրաստվածության շնորհիվ կարողացել ենք իրականացնել համայնքապահպան բազմաթիվ ծրագրեր:

Տարվա ընթացքում միմյանց հաջորդած համագործակցային, գործընկերային հարաբերությունների հաստատման արդյունքում հնարավոր եղավ մի շարք ոլորտներում առկա խնդիրներին տալ առարկայական լուծումներ, ունենալ տեսանելի և ակնառու առաջընթաց:

Նոր հեռանկարների ակնկալիքով, զարգացման ու համայնքապահպան ծրագրերով ոտք ենք դնում 2025թվական՝ կարևորելով յուրաքանչյուրի, համայնքում գործող կազմակերպությունների, ընկերությունների և հաստատությունների մասնակցությունը սոցիալ-տնտեսական, կրթամշակութային, զարգացման ծրագրերի իրականացման գործում, ու այն ամենն, ինչ հաջողությամբ կարողացանք գաղափարից դարձնել գործ, յուրաքանչյուրի ներդրման, պատասխանատու ու սրտացավ աշխատանքի արդյունքն է:

Շնորհիվ մեր լավագույն գործընկերների և մեր համայնքի բնակիչների կարողացանք գրանցել լուրջ ձեռքբերումներ, որոնք, կարծում եմ, տեսանելի են ու ակնառու:

Այս տոնական պահին, երբ ի մի է բերվում արվածը, ցանկանում եմ շնորհակալություն հայտնել միջազգային ու տեղական կազմակերպություններին, Սևան համայնքի ավագանու անդամներին, պետական կառույցներին ու անհատներին, որոնք համայնքային կյանքում ունեցան իրենց դերակատարումը, շնորհակալություն եմ հայտնում նրանց, որոնք հավատացին և վստահեցին տեղական իշխանությանը՝ դառնալով լավագույն և հուսալի գործընկեր, նպաստելով Սևան համայնքի զարգացմանը:

Սիրելի հայրենակիցներ

Մեր երկրի համար կարևորագույն ու բախտորոշ այս ժամանակահատվածում, երբ առաջնահերթ են անվտանգության ու խաղաղության ապահովման հիմնախնդիրները, երբ

մարտահրավերները հաջորդում են միմյանց, մենք պետք է դառնանք առավել քան համախմբված ու պետականամետ:

Ցանկանում եմ, որ 2025թվականը դիմավորեք լավատեսական տրամադրությամբ ու նորի ակնկալիքով: Ցանկանում եմ, որ Սևանն ապրի զարգացման նոր շրջան, իսկ Սևան համայնքի բնակավայրում ապրող բնակիչներն այստեղ տեսնեն իրենց և իրենց երեխաների ապագան:

Տոնական այս պահին առանձնահատուկ շնորհավորում եմ նորաստեղծ ընտանիքներին՝ նրանց մաղթելով սեր և միություն, այն ընտանիքներին, որոնց հարկի տակ տարին իմաստավորվեց մանկան ծնունդով. թող մանկան ճիչը լույս ու ջերմություն բերի մեր ընտանիքներին:

Շնորհավորում եմ այն ընտանիքներին, որոնց զավակները գտնվում են զինվորական ծառայության մեջ՝ ապահովում մեր խաղաղությունն ու անվտանգությունը: Մեր զինվոր տղաներին մաղթում եմ անվտանգ ծառայություն և բարի վերադարձ:
Շնորհավորում եմ մեր տարեցներին, տատիկ, պապիկներին՝ նրանց մաղթելով բարեկեցություն և արժանապատիվ կյանք, առողջություն և հոգեկան հանգստություն:

Շնորհավորում եմ նրանց, որոնք այս պահին իրենց ծառայությունը և աշխատանքային պարտականություններն են կատարում, որպեսզի մեր ամանորյա գիշերն անցնի խաղաղ և հանգիստ:
Խոնարհվում եմ այն ընտանինքների առաջ, որոնք ունեն թանկ ու անդառնալի կորուստներ, հավերժ փառք մեր հերոսներին, որոնք դարձել են անմահության մարտիկներ:

Դիմում եմ Սևանի տարածաշրջանի բոլոր բնակիչներին, մեր հայրենակիցներին
Իմ, համայնքապետարանի աշխատակազմի, բնակավայրերի վարչական ղեկավարների և համայնքի ավագանու անդամների անունից ընդունեք Ամանորի բարեմաղթանքներս ու շնորհավորանքներս:

Թող 2025 թվականը վստահորեն, հավատով, ջերմությամբ մտնի մեր օջախներ, իր թարմ շնչով բերի բերկրանք և ուրախություն, անսպառ սեր ու լավատեսություն մեր հայրենակիցներին:
Մեր երկրին և մեր ժողովրդին մաղթում եմ կայուն խաղաղություն և առաջընթաց, մեր համայնքին և նրա բնակիչներին՝ բարօրություն և զարգացում, մեր ընտանիքներին՝ բարգավաճում, սեր երջանկություն, արժանապատիվ կյանք, յուրաքանչյուրին՝ առողջություն, երկարակեցություն, բարեկեցություն, աշխատանքային ու անձնական հաջողություններ, հավատ ապագային նկատմամբ:

Թող 2025թվականը դառնա մեր իղձերի, նպատակների, ցանկությունների հանգրվանը, լինի մտքի ու ձիրքի, լավագույն ծրագրերի, արժանապատիվ աշխատանքի, ձգտումների և նոր բարձունքներ նվաճելու ու կայուն առաջընթացի տարի, թող խաղաղությունը թևածի հայոց երկնակամարում, իսկ Սևան համայնքը միավորող յուրաքանչյուր բնակավայր իր առանձնահատկություններով ու դիմագծով ամբողջացնի մեր համայնքի դեմքն ու դիմագիծը:

Շնորհավոր Ամանոր և Սուրբ Ծնունդ